# ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻԻ ՔԱՆԻ ՄԸ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անքննելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարգ համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Բարեջան վիճակաւոր վանաց և վիճակի սրբոյ Նախկին Լուսաւորչի Հայոց սրբազան առաքելոյն Թադդէոսի պահոցից արժանաւոր սրբազան Սահակ եպիսկոպոսի Սաղունեանց ընկալեալ զգրութիւնն ի Փետրուարի 18. յամի 1855 համարօք 16 և 17. զովութեանց արժանաւոր պատմարանութեամբ ձերում բարեջան աշխատութեանց. որոց առաջնումն յայտնէք յաղագս կալուածոց եւ կալուածագրոց սրբոյ վանիցն սրբազան առաքելոյն Թադդէոսի յորոց ի միջի զատնի և արքայական հրամանագիր վասն ազատութեանց սրբոյ վանիցն և գիւղի նորա յամենայն հարկաց թագաւորական որում անհամաձայն ի ժամանակս զալոյն և վերադառնալոյն զօրաց ռուսաց և փոփոխութեանց տէրութեան բռնացեալ Ալի Խանն Մակուայ ստանայ զհարկ ի վանիցն և գիւղն զրաւեալ ընդ իշխանութեամբ իւրով և այլոց եւս տիրեալ բազմացն ի կալուածոց վանիցն վասն անհոգութեանց վիճակաւորաց որոց ամենից զկալուածագիրսն ներկայացուցեալ ձեր նորուն գերազանցութեան Անիչկով դեսպանի Ռուսաց յառաջ քան զգնալն նորա ի Թէհրան և յետ գնալոյն նորա յանձնեցեալ զատնի ի նմանէ պաշտպանութիւն ձեր և վանիցն Նիկոլա Վլատիմէրիչ Խանիկով հիւպատոսին Ռուսաց ըստ որոյ և նա ուխի զձեզ քաղցրութեամբ և յուսադրութեամբ նպաստաւորութեանց ձեզ ի հարկաւորեալ գործսն ձեր. առ որ յառաջադրէք մեզ գրել առ նա ըղյանձնարարութիւն վասն գործադրութեանց կալուածագրոց վանիցն և հրովարտակացն Շահից յաղագս կարճելոյ զբռնաբարութիւն Ալի Խանին վասն պահանջելոյն նորա աւելի քան որչափ ստանայ ի տարին վանքական կառավարութիւն և յայնմ ամին անցելոյ դնելոյն ի վանքն զիւր զվերակացու և պահանջէ խոտս ի միարանից և ի գիւղականաց զբանհրայ հնձոց ցորենոյ և գարւոյ և տասանորդացուցանէ այնքան զի ցրուեսցին գիւղացիք եւ տապալեսցին կառավարութիւնք վանքին։

Եւ երկրորդաւն յայտնէք վասն Համզայ միրզա բարերարի ձեր և ամենայն Հայոց փոփոխման և յաջորդելոյն նորա ի Թաւրէզ Ֆերուզ միրզային որում կառավարութեան զեկավար իբրև տեղապահ զըտանի անձն ջատագովեցեալ ձեօք վասն իւրումն զովանի կառավարութեանց արքունական գործավարութեանց եւ վասն ունելոյն զշնորհ ի վերայ ձեր և ազգի Հայոց։ Յայտնէք նաև վասն արքայական հըրամանաւ Նասրատին Շահին պալատից յառակացուցեալ լինելոյն վասն պաշտպանութեան ընդհանուր հայազգեաց հպատակեցելոց իւրումն տէրութեան բարձրատոհմ միրզայ Ջէյնալ Աբիտին խանին և ստանձնելով յօժարմտութեամբ զայն պարտաւորութիւն խնամակալութեանց ազգի հայոց յանձնարարեալ է եղբօր իւրոյ ի Դաւրէժ միրզայ Հասան Ալի խանին որոյ բարերար պաշտպանութեամբն ապահովացեալ զըտանին ամենայն ժողովուրդք Հայոց ի Դաւրէժ և յամենայն կողմանս եւ առաքեալ է նա զիւր վերակացու վասն պաշտպանութեան ապահովութեանց ամենայն ազգի Հայոց և ձեզ եւ գրեալ է յայտնել ամենայն ազգի Հայոց վասն այնպիսի ողորմութեամբ տարածանելոյ ի վերայ ամենայն ազգի Հայոց եղելոց ընդ իւրով տէրութեամբ և աւելի քան զայն յանձնելոյ Ջէյնալ Աբիտին խանին վասն ամենայն նեղութեանց Հայոց ազգի յայտնել ինքեան Միրզայ Հասան Ալի խանին ի Թէհրան, որ աղագաւ առաքեալ էիք և զօրինակ գրութեանցն առ ձեզ վասն այս ամենայն սքանչելի աստուածային ներգործութեամբ առատանալոյ ի վերայ ազգի Հայոց բարեգութ խնամակալութեանց Շահի պալատից։

Կցորդեալ էիք այս ամենայն զուարճարար տեղեկութեանց նաև զանտինկալ պատահումն ոպանութեանց պարսականի ուրումն ապստամբութեամբ հայազգի պարտապահանջին, և զարհուրագին անհաբեկութիւն հայոց Դաւրիժու յաւուր Ծրա-

digitised by A.R.A.R.@

զալուցի յաւուր Ծննդեան յաղագս միաբան բազմութեամբ յորուցմանց պարոնից առ վրէժխնդրութիւն սպանեցեալ մահմետականի ապստամբութեամբ հայազգոյն. և ձեր խնդրագրով հայցելով զօգնութիւն զեմպետոյն և զայմազամին վասն պաշտպանութեան ազգի հայոց, և նոցին երկոցուն պաշտպանելոյ զազգն հայոց և զեմպետոյ զրելոյն առ ձեզ վասն յայտնելոյ զայնպիսի հովանաւորութիւն իւրեանց և միամանցուցանել զամենայն զհայազգիս վասն աներկիւղ մնալոյ իւրեանց. առ որ և ձեր առաքելոյն զչորս քահանայ և զքանի երեցի անձինս մերազանց յաղագս շնորհապարտութեանց ձեր և ձեզ հաւաստացեալ հօտին քրիստոնեական առ որ զրեալ էիք զի և մեք զմեր շնորհակալութիւն վասն այնօրինակ բարերարութեանց Մուշտէյիդի զըրեցուք նմա։

Իրաւի պարտաւորութիւն էր և է մեզ յայտնել զմեր շնորհակալութիւն ամենից բարերարաց ամենաօրհնելի որդւոց սրբոյ եկեղեցւոյ. բայց ըստ վաղնջական ապաբախտութեանց ոչ գտանելով զյուսալի արժանաւոր զրագիր պարսկերէն, մնամք պարտական մինչև ցայժմ նոյուն արժանանձնութեանց։ Բայց և այսու ամենիւ զըտանեմ յուսով, թէ և մեր յանկացեալ բարեկամութիւնք կօնսուլի պարոնից եղելոց ի Թիֆլիզ և պատգամաւորաց կամ դեսպանաց մեծազօր Շահի հանդիպեցելոց մեզ աստէն կամ ի Թիֆլիզ գոլով հասեալ ի լսելիս Շահին և ամենայն կառավարչաց տէրութեան պարոնից զէթ եղելոցն ի Թէհրան ես և ի Դաւրէժ ունիցին ազդել ի միտս այնոցիկ բարերարացն մերազանց թէ մեք ես վերապատուութեամբ ունիմք զամենայն զհարազատն մեծազօր Շահի առանց զանազանութեանց հաւատոց յայտնելոյ զմեր ջերմեռանդութիւն առաւելապատիկ վերապատուութեամբ մերով։ Եւ այժմ հանդերձեալ եմք գնալ ի Թիֆլիզ ուրանօր ունելով ջերմեռանդութեամբ սիրոյ հարստացեալ զկօնսուլն պարոնից ունիմք խնդրել նմա և տալ գրել նշանակեցեալ բարերարացն ազգի մերոյ զկանոնաւորեալ արժանաւորութեամբ շնորհակալութիւն մեր։

Համ. 172 Յամի ազգական 1305 և փրկչական 1856 Յունիսի 5 ի սուրբ Էջմիածին

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

Ներսէս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի։

Սրբազան Սահակ եպիսկոպոս Սաղունեանց վիճակաւորի սրբազան Թադդէոս Առաքելոյ վիճակի գրութիւնքն առ մեզ 8. և 21 Օգոստոսի համարօք 139, 140, 141, 146, և 147, հասեալ են առ մեզ առաջին երեքն ի 25 Յուլիսի և վերջին երկուքն յամսոյս 2, այլ մեք գոլով առաւել յոյժ զբաղեալ ի ծանր ծանր հարկաւորագոյն գրութիւնս գործովք տէրութեան լիալիր պատասխանի վասն ամենից գրեցելոցն ի ձեր սրբազնութեանց և ի հասարակութենէ պատուելի ժողովրդեան սուրբ լուսաւորչաեան հայոց Դաւրիժոյ որոց պատասխանագրութիւնք հանդերձ լիալիր տեղեկութեամբ բազում որպիսութեանց յուսամք յետ այսօրիկ գրել ոչ առաւել անագան իսկ այժմ այսու համառօտ տեղեկութեամբ առաքեմք ձեզ զծրարն գրութեանց մերոց առ ղայմաղամն և առ Մուշտէիդն Դաւրիժոյ որոց օրինակքն սփրեցեալ մեր պատուելի թարգման միրզա Հիւզէին խան կոնսուլի մեծազօր Շահի պարոնից աստէն ի Թիֆլիզ որդին աղա Առաքելի Մելիք Մինասեան առաքեաց առ հայրն իւր զորս և դուք ունիք ընթեռնուլ։ Ի գալն նորոց գործավարի կայսերական զորմէ չունիմք մեք տակաւին զլուր իմն որոյ անունն թէ ուստի իցէ հասեալ առ ձեզ մեզ ցարդ ամենեւին անյայտ է նմա ես ունիմք յանձնել ըստ ձերում հաճոյից վասն պաշտպան լինելոյ ձեզ և ազգի մերոյ այդր ի Դաւրէժ և յամենայն Պարսկաստան։

Խնդրեմ զողջոյն յինէն նուիրել սիրելեաց հարազատի մերում Աղա Առաքելի Մելիք Մինասեան և ամենայն միաբանութեանց սուրբ լուսաւորչաեան Հայոց և մեք եմք և մնամք մշտապարտաւոր մերում հայրենի ազգի և եկեղեցւոյ և ամենայնիւ բարեացակամ ձերում սրբազնութեանց։

Յամի ազգական 1305, և փրկչական 1856,
Համ. 301 Սեպտեմբերի 8 ի Թիֆլիզ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

Հրատ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

digitised by A.R.A.R.@